

ԱՐԴԻ ՀԱՍԱԴՐԱԿԱՆ ԿՐԿՆԱԿՈՐ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՋ

Ա. Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Համադրական բարդությունները բաղադրիչների միաձույլ կազմությամբ բարդ բառերն են: Նման կառուցվածք ունի նաև կրկնավոր բարդությունների մի մասը, երբ միևնույն արմատի կամ բառի կրկնված ձևերը համադրվում կամ կըցվում են իրար՝ կազմելով մեկ բաղադրություն: Այլ կերպ ասած՝ համադրական կրկնավոր բարդությունը միևնույն հիմնական ձևույթի կամ արմատի կրկնությունն է մեկ բառական կաղապարում, երբ բարդության բաղադրիչները հանդես են գալիս միաձույլ՝ կցված կամ համադիր վիճակում, ունենում են մեկ բառային շեշտ և արտասանվում են միասնաբար. ինչպես՝ *օրրսօրե, շարեշար, գունդագունդ, մեծամեծ, փայլփլել, շողշողալ, մարմրել, գեղգեղալ, չարչարել* և այլն: Նման բարդ բառերը հրապարակի վրա եղած հայագիտական աշխատությունների մեծ մասում դիտվում են կցական բարդություններ՝: Այս գնահատման հիմքում դրվում է բարդության բաղադրիչների կապակցման եղանակը՝ պարզ կցումը: Նշյալ տեսակետն ունեցող հայագետները, մեր կարծիքով, հենց հակասում են իրենց, երբ նույն արմատի կամ բառի միաձույլ կրկնությունը համարում են կցական բարդություն, իսկ անջատ կամ հարադրությամբ կրկնությունը՝ վերլուծական կամ հարադրական բարդություն: Այսինքն՝ այս պարագայում խախտվում է լեզվական նույն կարգի իրակությունները միևնույն սկզբույնով գնահատելու գիտական պահանջը: Ընդամիս, եթե *մեկ-մեկ, գունդ-գունդ, մեկ առ մեկ, գունդ առ գունդ* բառերը դիտում ենք կրկնավոր բարդություններ՝ հաշվի առնելով դրանց՝ նույն բառի կամ արմատի կրկնությամբ կազմված լինելը, ապա մի՞թե նույն բառի կամ արմատի կրկնություն չեն նաև *տնետուն, մեծամեծ, օրրսօրե* և այլ բառեր: Եվ, վերջապես, չէ՞ որ կան նաև, այսպես ասած, երկդրությամբ կրկնավորներ, որոնք հանդես են գալիս և՛ հարադրությամբ, և՛ կցականությամբ. հմմտ. *մերթ ընդ մերթ, գունդ առ գունդ, մեջ ընդ մեջ* և՛ *մերթընդմերթ, գունդառգունդ, մեջընդմեջ* և այլն: Ստացվում է, որ նույն բառերը մի դեպքում պետք է համարենք կրկնավոր, մյուս դեպքում՝ կցական, ինչպես վարվում են շատերը: Այսպիսի մոտեցումը, մեր կարծիքով, անընդունելի է:

Միաձույլ արմատակրկնությամբ կամ բառակրկնությամբ բարդ բառերը կրկնավոր բարդություններ են, որոնք բաղադրիչների անջատ արտահայտությամբ կրկնավորների մեջն են իրենց բաղադրիչների նույնականությամբ, տարբերվում են միայն բաղադրիչների կապակցման ձևով. մի դեպքում կրկնվող բառերը կամ արմատները կցվում են իրար, հանդես են գալիս միաձույլ վիճակում և կազմում են *համադրական կրկնավորներ*, իսկ մյուս դեպքում կրկնվող բառերը կամ արմատները

¹ Տե՛ս Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 182-183, Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 307-308, Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, Բ. 1, Եր., 1979, էջ 293-298, Այ. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 110-113, Ռ. Մկրտչյան, Բարդ բառերի դասակարգումը և նրանց բաղադրիչների իմաստային փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, «Լեզվի և ոճի հարցեր», Բ. 4, Եր., 1977, էջ 94 և այլք:

հանդես են գալիս անջատաբար, հարադրվում են իրար և կազմում են *վերլուծական* կամ *հարադրական կրկնավորներ*:

Այսպիսով, համադրական կրկնավորներն արդի հայերենի կրկնավոր բարդությունների շարքում մի առանձին խումբ են կազմում: Այսպիսիք ձևավորվում են գրեթե բոլոր խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությամբ: Իհարկե, հայերենի բոլոր խոսքի մասերը այս հարցում չունեն գործառական միևնույն հաճախականությունը: Բառակրկնության կաղապարով նոր բառեր են կերտում ավելի շատ գոյականները, ածականները, մակբայները, բայերը, քիչ չափով՝ կապերը, շաղկապները, ձայնարկություններն ու վերաբերականները: Եվ դրան համապատասխան էլ մենք համադրական կրկնավոր բարդությունները բաժանում ենք երկու խմբի՝ անվանական ու բայական: Իհարկե, այս տարբերակման մեջ, մանավանդ անվանական կրկնավորների ըմբռնման մեջ, կա որոշ պայմանականություն. այս խմբին ենք դասում նաև չթեքվող խոսքի մասերին պատկանող բառերի կրկնությամբ կազմված բարդ բառերը, քանի որ դրանց թիվը փոքր է, հանդես են գալիս ոչ հաճախադեպ և բայական կրկնավորներից ավելի շատ են տարբերվում:

Անվանական և բայական կրկնավոր բարդությունները հանդես են բերում կառուցվածքային, իմաստանրբերանգային ու կիրառական-ոճական տարբեր յուրահատկություններ:

ա. Անվանական համադրական կրկնավոր բարդություններ. կաղապարային դրսևորումները և իմաստային առանձնահատկությունները

Անվանական համադրական կրկնավոր բարդություններն ունեն անվանական նշանակություն և իրենց թվական գերակշռությամբ ու գործառական-կիրառական հաճախականությամբ զիջում են համադրական կազմությամբ բայական կրկնավորներին: Այս բարդությունները եղել են նաև գրաբարում, միջին հայերենում ու մեր բարբառներում և հատկորոշվել են իմաստային ամենատարբեր երանգավորումներով:

Որպես բառական միավորներ՝ անվանական կրկնավորները դասվում են անուն խոսքի մասերի շարքը: Դրանք կազմվում են գոյականներից, ածականներից, մակբայներից՝ իրենց կրկնվող ձևերի պարզ կցումով. *ինչպես՝ տերտեր, գրգիռ, պեսպես, թրթիռ, դողդոջ, բողբոջ, բարբառ* և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեն որոշ տարբերություններ բառի և արմատի կրկնությամբ կազմված բարդությունների միջև: Այդ տարբերություններից նշելի են մասնավորապես երեքը: Նախ՝ բառակրկնությամբ բարդության (*տեղնուտեղը, լիույի, բացեիբաց*) բաղադրիչներն ունեն ինքնուրույն գործածություն, ի տարբերություն արմատակրկնությամբ կազմված բարդության բաղադրիչների (*գրգիռ, թրթիռ, ծածանում*): Երկրորդ՝ բառակրկնությամբ բարդության բաղադրիչները մեծ մասամբ անհնչյունափոխ են (*ծանրածանր, մեծ-մեծ, քարքարոտ* և այլն), իսկ բարդության կաղապարում արմատակրկնությունը հիմնականում ուղեկցվում է հնչյունափոխությամբ. կրկնյալը լինում է անհնչյունափոխ արմատ, իսկ կրկնորդը՝ նրա հնչյունափոխված տարբերակը. *ինչպես՝ հոպոպ, բողբոջ, գրգիռ, թրթիռ* և այլն: Եվ վերջապես, բառակերտման գործընթացում արմատի կրկնությունն ավելի ակտիվ է, և հայերենում արմատակրկնությամբ բարդ բառերի թիվն ավելի մեծ է:

Անվանական համադրական կրկնավոր բարդությունները բաղադրիչների կապակցման տեսակետից բաժանվում են չորս խմբի՝

ա) *բաղադրիչների անմիջական կցումով անվանական բարդություններ*. *ինչպես՝ գեղգեղ, պեսպես, բեկբեկուն, հագիվհագ, բարբառ* և այլն,

բ) *և, ու միավորիչ շաղկապներով կապակցվող անվանական կրկնավոր*

ԱՆՔ. Ինչպես՝ լիռլի, տեղնուտեղը, շատուշատ, դեմուդեմ, ծուռումուռ, սուսուփուս և այլն,

գ) **Ճախդրավոր անվանական կրկնավոր բարդություններ**, երբ բարդության բաղադրիչների կապակցման դերով հանդես են գալիս գրաբարյան *ի, քստ, առ, քնդ* և *զ* նախդիրները. **Ինչպես՝ խառնհիսուն, փոխնիփոխ, օրըստօրե, գույնըգ-գույն, կաղիկաղ, մեջքնդմեջ** և այլն,

դ) **Ռոդակապով անվանական կրկնավոր բարդություններ**: Հոդակապը սակավ կիրառությամբ հանդես է գալիս նաև կրկնավոր բարդություններում, մի հատկանիշ, որով դրանք նմանվում են իսկական բարդություններին: Մ. Աբեղյանը գրում է. «Գրաբարից ունենք կրկնավորներ նաև իսկական բարդության ձևով. **Ինչպես՝ գունդագունդ, դեզադեզ** (առանց *Ու, է* ձայնավորների փոփոխության), **շեղջաշեղջ, կերպակերպ, զանազան, մեծամեծ, ջերմաջերմ, նորանոր, չարաչար, աղջամուղջ, ժանտաժուտ, արհամարհել, խառնամառն, հաստամեստ, խաժամուժ**»:

Անվանական կրկնավոր բարդությունը, ստանալով բառակազմական ձևույթ, կազմում է բառական նոր միավոր՝ կրկնավոր ածանցավոր բառ՝ բառիմաստի որոշակի մասնավորմամբ, իսկ անորոշ դերբայի *ել* կամ *ալ* վերջավորության հավելումով վերածվում է բայական կրկնավոր բառույթի. **Ինչպես՝ քարքարոտ, խորխորատ, շնկշնկան, բեկբեկուն, դողդոջուն, տերտերական, դողդողալ, կերկերուն, կերկերալ, գեղգեղանք, գեղգեղալ** և այլն:

Կրկնությամբ բառաբարդման տեխնիկան լեզվի բառապաշարի հարստացման ներքին միջոցներից մեկն է, որն ունի հազարամյակների պատմություն: Քանի որ դա առկա է եղել շատ վաղ անցյալում, ուստի բառակրկնությամբ մեր բառապաշարի, այդ թվում և հիմնական բառաֆոնդի հարստացումը եղել է գործունե երևույթ, ուղեկցել է հայոց լեզվին նրա բազմադարյա գոյության ընթացքում: Ի սկզբանե մեր գրավոր խոսքում կրկնավոր բառերի ակտիվ գործածության ամենավաղ վկայությունը հայերենի առաջին գրավոր հուշարձանի՝ Աստվածաշնչի թարգմանության մեջ այս կառուցվածքի բառերի հաճախադեպ գործածությունն է: Վ. Առաքելյանի հաշվումներով՝ Սուրբ գրքում գործածված համադրական ու հարադրական անվանական կրկնավոր բարդ բառերի թիվը հասնում է 147-ի, որից բնիկ են հիսուններեքը³: Նմանապես մեծ է նաև կրկնավոր բայերի թիվը⁴:

Բնական է, որ V դարից սկսած հայերենի բառապաշարն անընդհատ հարստացել է հիմնականում իր ներքին հնարավորությունների ընդլայնման և ամենից առաջ բառաբարդման ու բառածանցման եղանակների զարգացման ու կատարելագործման շնորհիվ: Բառաբարդման տեխնիկայի զարգացման գործընթացում համաժողովրդական խոսակցական լեզվի ու բարբառների ազդեցությամբ զգալի առաջընթաց է ապրել նաև բառակրկնությունը:

Հայերենում բառակրկնության ավանդույթով է պայմանավորված այն, որ կրկնությամբ, մասնավորապես արմատակրկնությամբ կազմված շատ բառեր այնպես են քարացած, և արմատի կրկնությունը նրանցում այնքան է մթազնած, որ արդեն չի գիտակցվում դրանց բաղադրյալ լինելը, և բնականաբար բացառվում է դրանց բաղադրիչների առանձին գործածվելը: Այսպես, օրինակ, այսօրվա **բամբասանք** բառը կազմված է **բամ-բաս-անք** բաղադրիչներից, որոնցից **անք**-ը գոյականակերտ վերջածանց է, իսկ **բամ**-ը («ասում են») և **բաս**-ը («ասում են»)

² Մ. Աբեղյան, *ԱԶՎ*, աշխ., էջ 183:

³ Վ. Առաքելյան, Հիմնգերոդ դարի թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., 1984, էջ 127:

⁴ Ցե'ս նույն տեղը, էջ 151:

միևնույն *Բայ* (սաել-խոսել) բայի գրաբարյան ներկա ժամանակի եզակի 1-ին և 2-րդ դեմքերի պարզ համակցումն են: Նույն սկզբունքով են կազմել նաև *բամբասել*, *անբամբաս*, *բամբասաներ* և այլ բառեր:

Միհնչդեռ այլ պատկեր են ներկայացնում ավելի ուշ ժամանակներում երևան եկած կրկնավոր բարդությունները, որոնցում դեռ գիտակցվում են կրկնվող արմատները: Այսպես՝ *տեք* բառը ստուգաբանորեն բաղադրյալ է. կազմված է գրաբարյան *տի* («մեծ») և *այք* («տղամարդ») արմատներից ու նշանակում է «մեծ տղամարդ»: Նույն *տեք* բառի համադրական կամ կցական կրկնությունը (տերտեր) արտահայտում է մի նոր իմաստ («քահանա»), հետևաբար արդեն նոր բառ է: Կամ՝ արևմտահայերենում *հոս* բառը նշանակում է «այստեղ», իսկ նույն բառի կրկնությունը (հոսհոս) դարձել է անլիարժեք, թեթևամիտ վարքի տեր մտավորականի համար հեզմական նշանակությամբ անուն կամ ծաղրանուն: Նման օրինակները ցույց են տալիս, որ բառերը կամ արմատները, երբեմն նաև բառաձևերը հաճախ կազմում են այնպիսի կրկնավոր բարդություններ, որոնց ուղեկցում է վերաիմաստավորումը, և նրանց իմաստային երանգավորումներն այնքան են հեռացած տվյալ բառի կամ արմատի բնիմաստից, որ դրանք արդեն գիտակցվում են որպես նոր բառական միավորներ:

Համադրական կառուցվածքի անվանական կրկնավոր բարդություններն ունեն կաղապարային մի քանի դրսևորումներ և հանդես են բերում իմաստակառուցվածքային տարբեր յուրահատկություններ՝ պայմանավորված կրկնվող արմատի կամ բառի խոսքիմասային արտահայտությամբ և կրկնյալ ու կրկնող բաղադրիչների ներքին-իմաստային փոխհարաբերությամբ: Իհարկե, համադրական կրկնավորները չունեն կաղապարային դրսևորման, հետևաբար նաև իմաստային երանգավորումների այն բազմազանությունը, որ բնորոշ է վերլուծական կառուցվածքի անվանական կրկնավորներին: Ավելացնենք նաև, որ վերլուծական կրկնավորների համեմատությամբ համադրական կրկնավորներն ունեն արտահայտության և իմաստային-բովանդակային պլանների սահմանափակություն: Ընդամիս, այս երկու գործոնները պատճառահետևանքային կապի մեջ են. իմաստային սահմանափակությունը պայմանավորված է արտահայտության սահմանափակությամբ: Բացի այդ, կրկնավորների երկու տեսակները տարբերվում են նաև բառիմաստի վերաիմաստավորմամբ. վերլուծական կրկնավորների մեջ վերաիմաստավորումն ավելի հաճախադեպ է ու խորը: Եվ դա բնական է. վերաիմաստավորումը և այս հիմքի վրա փոխաբերական իմաստի ի հայտ գալը կամ դրա գերակայության հաստատումը և բառի վերածվելը դարձվածքի հարադիր բարդությամբ բնորոշ հատկանիշներ են: Անվանական կրկնավորների համեմատությամբ բայական կրկնավորների մեջ վերաիմաստավորումը շատ ավելի խորն է ու ընդգրկուն:

Ակնհայտ է, որ ոչ բոլոր խոսքի մասերին պատկանող բառերն են կազմում անվանական կրկնավոր բարդություններ: Բառերը կրկնվելիս՝

ա) երբեմն պահպանում են իրենց խոսքիմասային իմաստը և միայն իմաստային այս կամ այն նոր երանգավորումն են ստանում,

բ) ավելի հաճախ հանդես են գալիս մեկ այլ խոսքի մասի նշանակությամբ, և բառիմաստի դաշտում փոփոխությունն ավելի մեծ է լինում: Ավելացնենք, որ որոշ կրկնավոր բարդություններ ուղեկցվում են այս երկու հատկանիշներից մեկով, իսկ որոշներն էլ՝ երկու հատկանիշներով միաժամանակ: Ընդ որում՝ մեկ կիրառության ժամանակ տվյալ կրկնավոր բարդությունը պահպանում է իր խոսքիմասային արժեքը, մեկ այլ կիրառության դեպքում փոխում է այն՝ պայմանավորված համատեքստի պահանջներով, մասնավորապես կրկնավոր բարդ բառի շարահյուսական գործառնությով, լրացական կիրառության դեպքում նաև գերադաս անդամի խնդրառությամբ կամ քերականական այլ հատկանիշներով:

Անվանական համադրական կրկնավոր բարդությունները կազմվում են՝

1. Գոյականի կրկնությամբ: Այսպիսիք իրենց կազմությամբ, իմաստով և հետևաբար նաև ձևաբանական արժեքով միատարր չեն և բաժանվում են մի քանի ենթախմբի՝

ա) կրկնավոր բարդություններ, որոնք մնում են գոյական բառախմբում: Այս դեպքում, սակայն, բարդությունը մեծ մասամբ չի ունենում իր միակ արմատի իմաստը. ինչպես՝ *մրմունջ*, (մունջ+մունջ), *կորկոտ* (կոտ+կոտ), *կկու* (կու+կու), *տերտեր* (տեր+տեր), *թրթիռ* (թիռ+թիռ), *բարբառ* (բառ+բառ), *դադար* (դար+դար), *փրփուր* (փուր+փուր), *բաբախ* (բախ+բախ), *պոպոկ* (պոկ+պոկ), *կկիծ* (կիծ+կիծ) և այլն,

բ) կրկնավոր բարդություններ, որոնք կազմվում են միևնույն գոյականի ուղիղ ձևի կրկնությամբ և ձեռք են բերում ածականական նշանակություն: Այսպիսիք ստանում են եզակի կամ հոգնակի որոշյալ. ինչպես՝ *թեթև* (-թև+թև) (զբաղմունք), *շողշողուն* (երազներ), *գոյնզգոյն* (ծաղիկներ) և այլն,

գ) կրկնավոր բարդություններ, որոնք կազմվում են միևնույն գոյականի տարբեր ձևերի կրկնությամբ և ստանում են մակբայական նշանակություն: Այսպիսիք ունենում են հոգնակիության, բազմակիության իմաստներ: Բարդության մի եզրը լինում է մեծ մասամբ գրաբարյան բացառական հոլովածու. ինչպես՝ *դարեդար*, *տնետուն*, *սարեսար*, *օրստօրե*, *օրեցօր*, *ափեափ*, *բերներերան*, *դոներդոռ* և այլն:

2. Ածականի կրկնությամբ: Այս բարդությունները բաժանվում են երեք ենթախմբի՝

ա) ածականի խոսքիմասային իմաստը պահպանող կրկնավոր բարդություններ: Սրանք ունեն բազմակիության իմաստ և ստանում են հոգնակի թվով որոշյալ. ինչպես՝ *մեծամեծ* (սպասելիքներ), *նորանոր* (ծրագրեր), *չերմաչերմ* (զգացումներ), *ծանրածանր* (շղթաներ) և այլն,

բ) մակբայի խոսքիմասային իմաստ ստացած կրկնավորներ. ինչպես՝ *չարաչար* (սխալվել), *լիռլի* (բավարարվել), *խիտառխիտ* (սփովել) և այլն,

(Ածականի կրկնությամբ կազմված որոշ բարդություններ՝ համադրական թե վերլուծական, հավասարապես կարող են ցույց տալ և՛ առարկայի, և՛ գործողության հատկանիշներ՝ ստանալով որոշչային ու պարագայական կիրառություններ. ինչպես՝ *ծուռումուռ* փայտ և՛ *ծուռումուռ* քայլել, *ծանր-ծանր* հոգսեր և՛ *ծանր-ծանր* մոտեցալ և այլն:)

գ) գոյականի խոսքիմասային արժեք ստացած կրկնավոր բարդություններ: Այս դեպքում կրկնվող ածականի առարկայական մասնավորումը կատարվում է գոյականակերտ վերջածանցի հավելումով. ինչպես՝ խորխորատ, չարչարանք, գեղգեղանք և այլն:

3. Բայարմատների կրկնությամբ: Այս դեպքում արմատի կրկնությունը կա՛մ բառակազմական ձևային իմաստի մասնավորումով կազմում է գոյական և կա՛մ դերբայական էլ, ալ մասնիկների հավելումով կազմում է բայ: Բայարմատի կրկնությամբ գոյականը հաճախ լինում է նաև անսովոր հնչյունափոխության արդյունք. ինչպես՝ *բամբասանք-բամբասել*, *խաբերա* (-խաբես+խաբես), *փայփայանք* - *փայփայել* և այլն:

4. Կապերի կրկնությամբ: Կապերը կրկնվում են մեծ մասամբ նախորդով, շաղկապով ու հոդակապով՝ ստանալով մակբայական նշանակությամբ հատկանիշի տևականության, կրկնության իմաստներ. ինչպես՝ *մեջընդմեջ*, *մեջումեջ*, *դեմուդեմ*, *մերթընդմերթ*, *տակետակ*, *հետզհետե*, *մոտեմոտ*: (նաև՝ մոտամոտ) և այլն, սակավադեպ էլ արտահայտում են առարկայի հատկանիշի բազմատեսակության իմաստ՝ փոխարկվելով ածականի. ինչպես՝ *պեսպես* (ծաղիկներ), *մեջընդմեջ* (ընդհատումներ) և այլն:

5. Համադրական կրկնավոր բարդություններ են կազմվում նաև սակավա-

թիվ մակրայների, դերանունների և այլ բառերի կրկնությամբ. օրինակ՝ *քովեքով, ինքնըստիներջան, վերովեր, քեզուքեզ* և այլն:

Բ. Բայական համադրական կրկնավոր բարդություններ

Համադրական կրկնավոր բարդությունների առավել ստվար խումբը բայական կրկնավորներն են՝ բայարմատի համադրական կամ կցական կրկնությամբ բարդ բառերը: Սրանք կազմվում են *բայ+բայ* կաղապարով, միայն այն յուրահատկությամբ, որ իբրև բարդության երկու բաղադրիչներ կամ համադրվող եզրեր հանդես է գալիս նույն բայարմատը՝ կրկնված ձևով: Այսպիսիք ժողովրդական լեզվամտածողության կմիքն են կրում և ավելի շատ գործածվել են բանավոր խոսքում, մեր բարբառներում, որտեղից և մուտք են գործել գրական լեզու: Բայական համադրական կրկնավոր բարդություններն իրենց թվով և կիրառական հաճախականությամբ գերազանցում են անվանական համադրական կրկնավորներին՝ պայմանավորված բայահիմքերի առավել շատ կրկնվելու հատկությամբ: Հր. Աճառյանը պատշաճորեն քննել է գրաբարում ու բարբառներում գործածված կրկնավոր բայերը՝ տալով դրանց արմատների տիպաբանական նկարագրությունը⁵:

Համադրական կրկնավոր բայերի կառուցվածքային ու իմաստային-գրբերանգային յուրահատկությունները հիմնականում պայմանավորված են մեր լեզվի մեջ դրանց տարբեր ժամանակներում երևան եկած լինելով: Այս հանգամանքի հաշվառումով էլ Ա. Աբրահամյանը խնդրո առարկա բայերը բաժանել է երկու խմբի կամ շերտի՝ հին և նոր⁶: Ընդսմին, հին շերտի մեջ են մտնում գրաբարում գործածված և արդի գրական հայերենում պահպանված կրկնավոր բայերը, իսկ նոր շերտի մեջ՝ ավելի ուշ ժամանակներում բարբառներից գրական լեզու մուտք գործած կրկնավորները: Այս երկու շերտի բառերը միավորվում են իմաստային միևնույն յուրահատկությամբ ու խոսքիմասային պատկանելությամբ: Բոլոր կրկնավոր բայերը, անկախ ծագման աղբյուրից, կրկնակ արմատների համակցում են և արտահայտում են գործողության կամ եղելության կրկնություն, բազմապատկություն, տևականություն, իմաստի սաստկություն և այլն: Ակնբախ են երկու բառաշերտի բառերի քերականական տարբերությունները, որ ծնում են նաև գործառական տարբերություններ:

Հին շերտի կրկնավոր բայերը բաժանվում են երկու խմբի՝

1. *Աճհնչյունափոխ կրկնավորներ*, որոնցում կրկնվող արմատը պահպանում է իր ամբողջականությունը. *ինչպես՝ չարչարել, արծարծել, բեկբեկել, կերկերել, ոստոստել, շողշողալ, ողողել, փայփայել, խողխողել, գեղգեղալ* և այլն: Սրանց հարում են շեշտափոխական հնչյունափոխությամբ ուղեկցվող այն կրկնավոր բայերը, որոնցում արմատի պատկերն անխաթար պահպանվում է. *ինչպես՝ կցկցել, ձգձգել, քրքրել* և այլն:

Հարկ է նշել, որ բայարմատի կրկնությունն ինքնին ենթադրում է իմաստի կրկնություն, որ մասնավորվում է գործողության կրկնության կամ բազմապատկության ձևով: Իրականում ոչ բոլոր կրկնավոր բայերն ունեն այս իմաստը: Արդի հայերենում բազմապատկության իմաստ ունեն հիմնականում զուգահեռաբար ոչ կրկնավոր տարբերակ ունեցող բայերը. *ինչպես՝ շողշողալ-շողալ, բեկբեկել-*

⁵ Հր. Աճառյանի՝ այս հարցի քննությունը հանդիսացող «Հայերենի բնաձայն և կրկնատր բառերը» աշխատությունը լույս է տեսել «Հանդես ամսօրեայ»-ի 1899 թ. հուլիս և օգոստոս ամիսների համարներում, ապա տեղ է գտել «Լիակատար քերականություն հայոց լեզվի» աշխատության 3-րդ հատորում (տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 3, Եր., 1957, էջ 83-100):

⁶ Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 137-156:

բեկել, կցկցել-կցել, ոստոստել-ոստանել, վազվզել-վազել և այլն: Սրանցից տարբերվում են ոչ կրկնավոր տարբերակ չունեցող բայերը, որոնք հանդես են գալիս միայն կրկնավոր ձևով և հիմնականում շեշտում են գործողության սաստկությունն ու արդյունավետությունը, իսկ բազմապատկության իմաստը սրանցում մղված է հետին պլան. *իճչպես՝ խողխողել, ողողել, քայքայել, կերկերել, փայփայել* և այլն: Ա. Աբրահամյանն իրավացիորեն նկատում է, որ ոչ միայն նման բայերի ոչ կրկնավոր արմատներն արդի հայերենում կենդանի չեն, այլև դրանցից շատերի արմատներն արդեն չեն գիտակցվում գրաբարում, իսկ, օրինակ, մի քանի այլ բայերի (*այլայլել, չարչարել, գեղգեղալ* և այլն) արմատները թեև պահպանված են (*այլ, չար, գեղ*), այնուհանդերձ բառակրկնության կաղապարում սրանք բառիմաստի զգալի փոփոխություն են կրել⁷:

2. **Հնչյունափոխված կրկնավորներ**, որոնց մեծ մասը ժառանգված է գրաբարից. *իճչպես՝ արհամարհել, բարբախել, բարբառել, գարհուրել, կակազել, ծածանել, շոշափել* (շաշափել), *տատամսել* (տատամսիմ), *փաթաթել, փոփոխել* և այլն:

Հին շերտի հնչյունափոխված կրկնավոր բայերը հատկորոշվում են հնչյունափոխության տարաբնույթ դրսևորումներով, որոնց չենք անդրադառնում հետո: Այստեղ միայն նշենք, որ կրկնավոր բայերի մեջ հնչյունափոխությունը մեծապես նպաստել է բառիմաստի մթազմմանը: Իմաստի լրիվ մթազմում ունեցող արմատակրկնությամբ բայերի մեծ մասը բնութագրվում է գործողության կամ եղելության ինտենսիվության արտահայտությամբ. օրինակ՝ *հեկեկալ, ծածանել, կաղկանձել* և այլն:

Նոր շերտի մեջ մտնող կրկնավոր բայերը որակապես տարբերվում են հին բայաշերտի նմանատիպ բայերից: Սրանք արդի հայերենի բուն կրկնավոր բայերն են, որոնց արմատական ձևերը այսօրվա լեզվամտածողությամբ կենդանի են և կա՛մ նոր կազմություններ են, կա՛մ էլ նոր ժամանակներում գրական լեզու մուտք են գործել մեր բարբառներից: Այս բայերից շատերին էլ ուղեկցել է հնչյունափոխությունը՝ բառաձևի ու իմաստի մեջ էական փոփոխություն չմտցնելով: Եվ ըստ փոփոխվող հնչյունի բնույթի՝ համադրական կրկնավոր բայերը բաժանվում են երկու խմբի՝ ձայնավորի հնչյունափոխությամբ կրկնավորներ և բաղաձայնի հնչյունափոխությամբ կրկնավորներ: Ի հարկե, առավել հաճախադեպը ձայնավորների հնչյունափոխությունն է. մասնավորապես բարդության երկրորդ եզրում՝ կրկնորդում *ա, ո, ե* ձայնավորների վերածվելը գաղտնավանկ *ը*-ի. *իճչպես՝ խաբխբել, բոթբթել, խազվզել, ծայծլել, ծախծխել, ծամծմել, կապկպել, ճաքճքել, մաղմղել, մարմրել, դաղղղել, թափթփել, ծեփծփել, ջոկջկել, ցոլցլալ, փորփրել* և այլն (հմմտ. խաբ+խաբ+ել, բոթ+բոթ+ել և այլն):

Ե և *ո* ձայնավորների հնչյունափոխությամբ հատկորոշվող կրկնավոր բայերից շատերն ունեն նաև անհնչյունափոխ զուգահեռ ձևեր կամ տարբերակներ. *իճչպես՝ ծեփծփել-ծեփծեփել, բոթբթել-բոթբոթել, դողդղալ-դողդողալ, ջոկջկել-ջոկջոկել* և այլն: Այս զուգաձևությունների գոյությունը հետևանք է արդի հայերենում տվյալ բայերի՝ արտահայտության միօրինակության հասած չլինելու, բայց այնուհանդերձ միօրինակության միտումն ակնհայտ է. բարեհնչյունության պահանջով անհնչյունափոխ ձևերը դրսևորում են հաղթելու միտում:

Բայական համադրական կրկնավոր բարդությունների մեջ մի առանձին խումբ են կազմում բնաձայնական կրկնավորները, որոնք, գրական լեզվում գործածվելով հանդերձ, լայնորեն տարածված են բարբառներում: Բնաձայնական բայական կրկնավորների առանձին հնչյունների ու վանկերի սուսական կրկնությամբ կազմված լինելը խիստ բնական է. սրանք բնության ու կենդանիների ձայների,

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 139:

ինչպես նաև առարկաների շարժումներից առաջացող ձայների լեզվական վերարտադրությունն են, որ արտահայտում են գործողության սաստկության ու բազմապատկության իմաստներ: Ա. Աբրահամյանի հավաստմամբ՝ սրանք գրաբարում սակավ էին⁸, և բնականաբար գրաբարից արդի գրական հայերենին անցած բայերն էլ քիչ են: Ինչպես՝ *խոխոջել, կարկաչել, մոմոալ, խրխնջալ* և այլն, որոնցից «բնածայն բուն կրկնավոր կարող է համարվել *մոմոալ* բայը, որի մեջ *մ* արմատը *n* սաստկական տարրի հետ մի ամբողջություն է կազմել և կրկնվել: Այսպիսի կրկնությունը կենդանի ու օրինաչափ է ժամանակակից գրական հայերենի համար»⁹: Հիշյալ բայերը կրկնավոր են դիտվում պատմականորեն, քանի որ դրանցում առկա է բաղաձայնով արտահայտված արմատի կրկնությունը (ասենք՝ *խրխնջալ* բառի մեջ սկզբնական արմատն է *խ*, *կարկաչել* բայի մեջ՝ *կ*, *մրմնջալ* բայի մեջ՝ *մ*՝ զուգակցված այլ հնչյուններով (բերված օրինակներում՝ *խ -ն՝ ր, ն, ջ, կ-ն՝ ա, չ, մ-ն՝ ր, ն, ջ* հնչյուններով): Հետևաբար արմատների և կազմիչ այլ տարրերի յուրահատուկ միահյուսումն ու սրանց առանձին իմաստների մթագնումը ժամանակի ընթացքում հանգեցրել են այն բանին, որ այս բայերն այլևս չեն գիտակցվում որպես կրկնավոր բարդություններ, ուստի և ժամանակակից հայերենի համար «չունեն բուն կրկնական քերականական նշանակություն»¹⁰:

Արդի հայերենում լայն գործածություն ունեցող բուն համադրական կրկնավոր բայերը խոսակցական-բարբառային ծագում ունեն. երևան են եկել ժողովրդախոսակցական լեզվում, որտեղից էլ մուտք են գործել գրական հայերեն: Այսպիսիք ավելի շատ գործածվել են աշխատավորական-արհեստավորական խավերի կյանքը պատկերող գրողների՝ Պ. Պոռչյանի, Հովհ. Թումանյանի, Մուրացանի, Նար-Ռոսի, Բակունցի, Ստ. Ջորյանի և այլոց երկերում՝ միջավայրի ու սոցիալական երանգավորում ստեղծելու նպատակով: Արդի հայերենի բուն կրկնավոր բնածայնական բայերն են՝ *դմբդմբալ, գողգողալ, զլզլալ, դրնգդրնգալ, զխկզխկալ, թրխկթրխկալ, թմիթմիալ, ծնգծնգալ, լկլկալ, լղլղալ, լփլփալ, խզխզալ, խլթխլթալ, խշխշալ, խոխոալ, ծլծլալ, կոկոալ, ճթճթալ, մշմշալ, չխկչխկալ, սլսլալ, սրթսրթալ, փնչփնչալ, փլփլալ, ֆշֆշալ, ֆոֆոալ* և այլն:

Ընդհանրապես կրկնությամբ բարդ բառերի ձևավորումը ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ երևույթ է, իսկ բնածայնական կրկնավորներն այս տեսակետից առաջին պլանում են: Այս բայերի կրկնական իմաստները պայմանավորված են կրկնվող արմատների գիտակցմամբ. տվյալ իմաստը գիտակցվում է կրկնված արմատի մեջ, «և այսպիսով բայական բառույթը հանդես է գալիս ինչպես կազմության, այնպես էլ իմաստային կրկնական արժեքով»¹¹:

Բնածայնական բայերի ուսումնասիրությունը ուրվագծում է դրանց առաջացման ուղին: Նախապես որպես արմատ հանդես է եկել մեկ բաղաձայն (բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, մ, ն, գ, ջ, պ, ս և այլն), որին ավելացել է մեկ կամ երկու, հաճախ էլ երեք այլ բաղաձայն (թփ, բխ, բդ, դմփ, չմփ և այլն)՝ ստեղծելով բնածայնական արմատ: Ընդ որում՝ առաջին բաղաձայնին ավելացած հնչյունները նախապես ունեցել են ածանցական նշանակություն, բայց ժամանակի ընթացքում, ձուլվելով առաջին հնչյուն-արմատին, կորցրել են իրենց այդ նշանակությունը, և բառի կազմությունը մթագնել է: Ածանցական իմաստը թերևս պահպանել են միայն բնածայնական արմատ-հնչյունին հաջորդող *ր, ռ* և *լ* ձայնորդները, որոնք արմատական ձևին հաղորդում են սաստկության իմաստ: Այսպես՝ *դրմբ-դրմբ-դրմբալ, զրնգ-զրնգ-զրնգալ, խրթ-խրթթ-խրթխրթալ, չրմփ-չրմմփ-չլմմփչլմմփալ* և այլն:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 149-150:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Նույն տեղում, էջ 150:

¹¹ Նույն տեղում, էջ 152:

Այսպիսով, համադրական կրկնավոր բայերի քննությունը մեզ բերում է հետևյալ եզրահանգումների.

1. Կրկնավոր բայերը հայերենի բառապաշարի մի որոշ մասն են կազմում և դրսևորում են գործողության կամ եղելության կրկնություն, բազմապատկություն, ուժգնություն, տևականություն, սաստկություն և այլ իմաստներ:

2. Կրկնականության ըմբռնումը պայմանավորված է կրկնվող արմատի առանձին գիտակցմամբ և գործածությամբ:

3. Բայական կրկնավորները բաժանվում են երկու խմբի՝ բնածայնական և ոչ բնածայնական, որոնցից ավելի մեծ թիվ են կազմում մեր բարբառներից գրական հայերենին անցած բնածայնական կրկնավորները: Սրանք էլ իրենց հերթին բաժանվում են երկու շերտի՝ հին և նոր: Այսօր կենդանի կրկնավորներ են նոր շերտի բնածայնական բայերը, իսկ հին շերտի «երբեմնի կրկնավորները, չնչին բացառությամբ, ժամանակակից գրական հայերենում այլևս չեն ճանաչվում իբրև բուն կրկնավորներ, կատարվել է կրկնվող արմատի և զուգակցվող այլ բաղադրիչների ձուլում և կազմության մթազանում»¹²:

4. Բնածայն արմատները ստեղծվում են բնածայն հնչյունների սկզբից այլ հնչյունների հավելումով, իսկ դրանց վերջից բայական վերջավորության ավելացումով կազմվում են բնածայնական պարզ բայերը: Բնածայն հնչյունները, պարզ արմատի մեջ կրկնված լինելով, արմատի կրկնության ժամանակ նորից չեն կրկնվում: Այսպես, օրինակ, *զ* բնածայն հնչյունի կրկնված ձևի (*զզ*) սկզբից տարբեր բաղաձայնների, իսկ վերջից *ալ* վերջավորության ավելացումով ստանում ենք մի շարք բնածայնական բայեր՝ *բզզալ, դզզալ, մզզալ, ճզզալ, վզզալ* և այլն: Եվ այս բայերի արմատի կրկնությամբ էլ կազմվում են գործողության բազմապատկություն կամ սաստկություն արտահայտող բնածայնական կրկնավոր բայերը. ինչպես՝ *բզբզալ* («բզզոցի ձայն հանել»), *դզդզալ* («դզզոցի սուր ձայն հանել»), *մզմզալ* («ցավել», «կսկծել»), *վզվզալ* («շարունակ վզզալ»), *ճզճզալ* («անընդհատ լալ») և այլն: Նույն ձևով *ռ, զ, ժ* հնչյուններով ունենք համապատասխան պարզ և կրկնավոր բնածայնական բայեր. *դռռալ-դռդռալ* («դը՛ն-դը՛ն ձայն հանել»), *զոռալ//զոռալ-զոզոռալ* («բղավել, աղաղակելով լաց լինել»), *վշշալ-վշվշալ* («շարունակ վշշալ»), *փշշալ-փշփշալ* («փը՛շ-փը՛շ ձայն հանել»), *թշշալ-թշթշալ* և այլն:

5. Որոշ կրկնավոր բնածայնական բայեր չունեն իրենց պարզ տարբերակը. ինչպես՝ *դունդունալ* («քթի տակ երգել»), *խլխլալ* («ետալ, եփ գալ»), *մորմորալ* («դժգոհ ձայներ հանել»), *չփչփալ* («ճողփալ»), *քլքլալ* («քը՛լք-քը՛լք ձայն հանել»), *լքլքալ, կմկմալ, մշմշալ* և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, բնածայնական կրկնավոր բայերը միավանկ արմատների կրկնությամբ կազմված ձևեր են, որոնց հաճախադեպությունը պայմանավորված է կրկնվող արմատի կարճությամբ. որպես կանոն՝ լեզվական կարճ միավորը կրկնվելու ավելի մեծ հավում է դրսևորում:

Ավելացնենք, որ համադրական կրկնավոր բարդություններում շատ հաճախ կատարվում է հնչյունափոխություն: Ընդ որում՝ հնչյունափոխվում են թե՛ անվանական և թե՛ բայական կրկնավորները, միայն թե տարբեր հաճախականությամբ. հնչյունափոխության տարաբնույթ դրսևորումների ընդգրկման առումով անվանական կրկնավորները գերակայում են, իսկ հնչյունափոխված բառական միավորների քանակով բայական կրկնավորներն ավելի մեծ թիվ են կազմում: Համադրական կրկնավոր բարդություններում կատարվող հնչյունափոխությունը մեկ այլ քննարկման նյութ է, ուստի այստեղ չենք անդրադառնում:

¹² Նույն տեղում, էջ 156:

Այսպիսով, համադրական կրկնավոր բարդությունները՝ որպես բարդ բառերի մի տարատեսակ, հատկորոշվում են կառուցվածքային, իմաստանրբերանգալիս ու գործառական-ոճական տարրեր յուրահատկություններով:

А. С. КАРАПЕТЯН - К вопросу об оценке синтетических повторяющихся словосложений в современном армянском языке. - Синтетические повторяющиеся словосложения - это повтор одного и того же слова или корня в одной лексической форме. При этом составные части словосложения пишутся слитно, имеют одно словесное ударение и произносятся вместе. Такие словосложения разделяются на две группы: именные и глагольные. Именные повторы имеют именное значение и составляются повтором существительных, прилагательных, числительных, местоимений и других слов, иногда сохранив или изменив значение части речи (տերտեր, թեթև, շարեշար, գունդագունդ, մեծամեծ, ջերմաջերմ, խիտախիտ, քեզուքեզ и т.д.). Глагольных синтетических повторов много, они составляются повтором корня и передают однородность, длительность действия (վազվզել, շողշողալ, դեղզեղալ, քաշքշել, մարմրել и т.д.). В синтетических повторяющихся словосложениях происходят разнообразные звуковые изменения.